



« 25 » 10 2013

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ

№ 1/17. 4/9770-13

## ՀՐԱՄԱՆ N 966 - 2h

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 10-ի «ՀՀ սողանքային աղետի կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» թիվ 27 արձանագրային որոշման 2-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 531-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 13-րդ կետով՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝
  - 1) աշխատանքային խմբի ղեկավար՝ փ/ծ գեներալ-մայոր Ս.Ազարյան, ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) տնօրեն,
  - 2) աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ՝ փ/ծ գնդապետ Հ.Եմիշյան, ՀՀ ԱԻՆ ՓԾ բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության (այսուհետ՝ ԲՊԱՀՎԿՎ) պետ,
  - 3) անդամներ՝
    - ա. փ/ծ գնդապետ Արթուր Խաչիկյան, ՀՀ ԱԻՆ ՓԾ ծառայության կազմակերպման վարչության պետ,
    - բ. Վիգեն Ավետիսյան, ՀՀ բնապահպանության նախարարության ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչության պետ (համաձայնությամբ),
    - գ. Վարդան Վարդանյան, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ընդերքի վարչության պետ (համաձայնությամբ),
    - դ. Արթուր Բաղդասարյան, ՀՀ գյուղատնտեսության նախարարության հողերի օգտագործման և մելիորացիայի վարչության պետ (համաձայնությամբ),
    - ե. Հովիկ Դավթյան, ՀՀ մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հուշարձանների վերականգնման բաժնի պետ (համաձայնությամբ),

գ. Լևոն Քոսյան, ՀՀ քաղաքաշինության նախարարության ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման մեթոդաբանության վարչության պետ (համաձայնությամբ),

է. Գևորգ Գևորգյան, ՀՀ քաղաքաշինության նախարարության ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման մեթոդաբանության վարչության ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման մեթոդաբանության վարչության ինժեներատեխնիկական աշխատանքների բաժնի պետ (համաձայնությամբ),

ը. Կարեն Գասպարյան, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ճանապարհաշինական վարչության նախագծային բաժնի պետ-վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ),

թ. Աննա Իվանյան, ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության տարածքային զարգացման ծրագրերի բաժնի պետ (համաձայնությամբ),

ժ. Կարեն Դադբաշյան, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչության պետ (համաձայնությամբ),

ժա. Մարատ Գրիգորյան, Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան (համաձայնությամբ),

ժբ. Արկադի Կարախանյան, Գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանության ինստիտուտի տնօրեն (համաձայնությամբ),

ժգ. աշխատանքային խմբի քարտուղար՝ փ/ծ փոխգնդապետ Ա.Մուրադյան, ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿՎ տարերային աղետների բաժնի պետ,

ժդ. փ/ծ գնդապետ Տիգրան Գիդայան, ՓԾ ԲՊԱՀՎԿՎ աղետների հետևանքների վերացման, պլանավորման, կանխատեսումների և ծրագրավորման բաժնի պետ:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

սահմանված ժամկետներում կազմակերպել աշխատանքային խմբի կողմից սողանքային աղետի կառավարման բնագավառը կարգավորող իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների նախագծերի ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

4. Հրամանը հայտարարել ըստ առնչության:



Ա. ԵՐԻՅՅԱՆ

Ստիգ